ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունվարի 2024 թվականի N 32-Ա

«ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի կարիքների համար դահլիճային աթոռների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 8 մասնակիցներ, այդ թվում «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթում բացակայում են ապրանքի տեխնիկական բնութագիրը և լիազորագիրը, սակայն առկա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել, հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ***որոշում եմ***.

1.«ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի տնօրենին և ՀՀ Ֆինանսների նախարարություն:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2024թ. հունվարի 09

ք. Մարտունի